

վերագառնում, ոյլ մնաւմ է քաղաքներում, ուր նրա զօկութիւնը միանգամայն կարշում է, մանաւանդ երբ, ինչպէս կրթուածներից ոչ քչերը, ամուսնանում են օտար ազգիկների հետ:

Այսպիսով զօկն ու Զօկաստանը լինելով Կովկասի դաւառական անկիւնների մէջ ամենալուստաւորն, ամենապակաս ազգագրական ինքնուրացնութիւնն է ներկայացնում:

### Բ. ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄՆ

Գողթան գաւառը թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան շրջանում՝ շատ ջերմեռանդ և աւանդապահ է եղել Նեռնստ, առանձնացած երկիր լինելով այսակ հեթանոսութիւնը՝ կարսղացել է պահպանուել մինչև ս. Մեսրոպի օրերը, ինչպէս և քրիստոնէութիւնը Ս. Բարդուղիմէոս առաքեալի քարոզութեամբ այստեղ սկսուելով կարսղացել է յարատեել մինչև Ս. Լուսաւորիչ:

Գողթան գաւառը իրաւամբ նախահաւատ է կոչում, որովհետեւ սա և Սիւնիքը ամենից առաջ են ընդունել քրիստոնէութիւնը: Այստեղ քարոզել է ս. Բարդուղիմէոս առաքեալը, դուցէ և ս. Թովման: Ամրապատկանից դարձով ս. Բարդուղիմէոսը մաել է Գողթն, ուր շինել է մի եկեղեցի, որ կոչուել է Տեղան ընդ առաջ և բոլորովին կտրել Որդուատի վնասակար յրերը, մկրտել է Շաբ իշխանին ամբողջ անով և առաջնորդ է կարգել իւր աշակերտներից մինին՝ Կոմսին, որից և ակիզիքն է առել Գողթնի եպիսկոպոսութիւնը: Մինչև Ս. Լուսաւորիչ քարոզութիւնը յիշւում են Բարելաս և Մուշէ, իսկ Լուսաւորչից յետոյ մինչև իններորդ գարը, 303 տարիների ընթացքում իրբե Գողթնի առանձին, անկախ եպիսկոպոս յիշւում էն. Մովսէս Տարօնացի, Սահակ Տարօնացի, Զրուանդատ, Ստեփանոս, Յովհաննէս, Մուշէ (500—550), Անաստաս (550—580), Սիոն (594), Մարտիրոս (628), Եսայի (768—773, յետոյ կաթուղիկոս). Թ. գարից մինչև ԺԴ. գարը

այլևս Գողթնի եպիսկոպոսներ չեն յիշատակում, որովհետեւ այս միջոցում Գողթնը ևնթարկուել է Սիւնեաց մետրոպոլիտի վերատեսչութեան, ինչպէս այդ պարզ երեւել է Սարդիս Ա. կաթուղիկոսի 1006 թ. շրջաբերականից, որու սրոշ կերպով ասուած է. ևն յերնջակայ գաւառին Բատաձոր, զօր Գողթնեցիքն էին առեալ, նաև զՎանանդ և Գողթն բոլորովին, որոց թէպէտ եպիսկոպոսնեալ էր և կայր սակաւ վայրացն, այլ ի ներքոյ Սիւնեաց նուանեալ էր:

ԺԿ. գարի վերջում նորից երեւեմեն Գողթան եպիսկոպոսները անկախ Սիւնեաց կամ Տաթեփ մետրապօլիտներից և սրանցից յայտնի են Սարկաւագ (1280—1300), Տէրունական (1424), Խաչատուր (1699), Պետրոս (1680), Թովմաս Վանանդեցի (1491—1712), Յովհաննէս (1708), Թովմաս (1737), Յովհաննէս (1740), Սիմէոն (1830). Սաեղել է վերջին եպիսկոպոսը, որովհետեւ 1838 թ. Եպիսկոպոսութիւնը վերացաւ ել է, ենթարկուելով Երևանեան թեմի առաջնօրդութեան և այնուհետեւ նշանակուել են լոկ վանահայրեր: Սրանցից յայտնի են. Յակոբ վարդապետ (1870), Կարապետ վարդապետ (1871), Անանիա վարդապետ Համազառպետաց (1881), Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան (1883) և Սահակ վ. Բաղդասարեան:

#### Դ. ՄՏԾՈՒՈՐ ԵՒ ՀԱՅՈՐԾԿԾԿԸՆ ԶԱՐԴԱՑՈՒՄ

«Պեղեցիկ»<sup>1)</sup> և «գինեէտ»<sup>2)</sup> Գողթն գաւառը բաւական մեծ գեր է կատարել նաև դրական ասպարիզում: Դեռ շատ հին ժամանակներում գողթան երգիչները ախորժելով երգել և պատմել են Տիգրան Ա. Վահագնի և Արտաշէս Բ. գործերը: Եւ այն մի քանի քեկորները, որ մեր մեծ պատմահօր ջանքերով պատմուած են կորստից, մեր ժողովրդական բանահիւսութեան գոհարներն են կազմում: Սակայն վաղուց արգէն գագարել է այս երկուում:

1) Սա. Օբբելեան. գլ. ԺԵ. 2) Մ. Խորենացի